ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 05.06.2014թ տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին

Ն. Մովսիսյան **մարզպետի տեղակալ**
Մ Աբգարյան **մարզպետի տեղակալ**
Հ.Գևորգյան **մարզպետարանի աշխատակազմի ղեկավար**
Հ.Օհանյան **ՀՀ ՏԿՆ վարչական վերահսկողության բաժնի պետ**
Ռ.Գրիգորյան **ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ**
Ա Մանուկյան **ՀՀ ԱԻՆ Արագածոտնի փրկարարական վարչության պետ**
ՀՀ ոստիկանության մարզային վարչության Աշտարակի,Ապարանի, Թալինի բաժինների պետեր
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՀՀ Արագածոտնի մարզի խորհրդի նիստի

05.06.2014թ. ժ. 11.00

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների մասին /զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. Համայնքների կողմից հողի հարկի և գույքահարկի վարվող շտեմարաններում /բազաներում/ տեղ գտած անճշտությունների վերացման և նշված ոլորտում օրենսդրական փոփոխությունների մասին/զեկ. մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

3. Ցրտահարության հետևանքով տուժած շահառուների ցուցակների և սերմերի բաշխման գործընթացի մասին / զեկ. գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

4. Մարզի համայնքներում առկա պատմամշակութային հուշարձանները ապօրինի շինարարություններից պահպանելու մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ /:

5. Մարզի համայնքներում գերեզմանատների առկա իրավիճակի, պատմական գերեզմանների տարածքում ապօրինի հողհատկացումների և համայնքների կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին / զեկ. մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. ԴԱՎԱՅԱՆ:

6. ՀՀ Արագածոտնի մարզում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ոլորտին վերաբերող առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների մասին/զեկ. փ/ծ գնդապետ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ/:

7. Հայտարարություններ՝

- ՀՀ ագրարային համալսարանի ընդունելության նպատակային տեղերի մասին /Յու. Ազատյան/:

- Մարզի համայնքների վարչական շենքերի վրա ՀՀ պետական դրոշի պատշաճ առկայությունն ապահովելու մասին /Ս. Հովսեփյան/:

Հունիսի 5-ին Արագածոտնի մարզպետարանում կայացավ մարզխորհրդի նիստը, որը վարում էր մարզպետ Սարգիս Սահակյանը: Օրակարգային առաջին հարցը նա տրամադրեց մարզային ոստիկանության պետ, գնդապետ Ռ.Գրիգորյանին, ով նշեց, որ ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյանի հանձնարարականով, իրենք պարբերաբար հանդիպումներ են ունենալու մարզային և համայնքային իշխանությունների հետ և քննարկելու են համատեղ իրականացվելիք ծրագրերը: Ոստիկանապետը խոսեց իրենց հատկացված՝ ավագ դպրոցների ոստիկանների հաստիքների,ապօրինի պահվող զենք-զինամթերքների և դրանց օրինականացման, համայնքային ոստիկանների համար համայնքներում առկա աշխատանքային պայմանների և այլ հարցերի մասին: Անդրադառնալով Ռ. Գևորգյանի կողմից բարձրացված հարցերին, Սարգիս Սահակյանը կարևորեց ապօրինի զենք-զինամթերքի օրինականացման եւ համակարգի կողմից իրականացման գործընթացում համայնքապետերի աջակցությունը:

Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման և այդ գործընթացի վարմանը, ոլորտում առկա փոփոխություններին անդրադարձավ ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետ Նորայր Գալստյանը: Նա տեղեկացրեց, որ 2014 թ. առաջին 5 ամիսների ընդհանուր հաշվարկով սեփական եկամուտները կատարվել են 27,5 %-ով:: Այդ թվում, հողի հարկը կազմել է 21,5 %, գույքահարկը՝ 34,1%, տուրքերն ու վճարները՝ 33%, հողի վարձավճարը՝ 24,3%: Վերլուծելով այս ուղղությամբ համայնքներում իրականացվող աշխատանքը, մարզպետը համայնքապետերին հորդորեց, որպեսզի սեփական եկամուտների հավաքագրումը դարձնեն իրենց ամենօրյա ուշադրության առարկա և բացառեն զրոյական ցուցանիշները, ինչպիսիք որ առկա են մի քանի համայնքներում:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յուրա Ազատյանը տեղեկացրեց, որ մարտի 29-31-ը արձանագրված ցրտահարության հետևանքով կառավարության կողմից ցուցաբերվող աջակցության ծրագրի շրջանակում տուժած համայնքներում ուսումնասիրություններ են կատարվել և հստակեցվել են այն տնտեսությունները, որոնք ընդգրկվելու են այդ ծրագրում: Այս կապակցությամբ Սարգիս Սահակյանը նշեց, որ համայնքապետերը պետք է առավելագույն օպերատիվություն եւ անաչառություն դրսևորեն՝ հօգուտ տուժած տնտեսությունների: Նա կարևորեց որ առավելագույնս պետք է օգտագործել նաև գյուղացիների համար շահեկան այլ ծրագրերի՝ ազոտական պարարտանյութի, դիզելային վառելիքի,

սերմացուների հատկացման հնարավորությունները:

Քաղաքաշինության վարչության պետ Աշոտ Դավայանի քննարկման առարկան վերաբերում էր համայնքներում առկա պատմամշակութային հուշարձանները ապօրինի շինարարություններից զերծ պահելու, գերեզմանատների առկա իրավիճակի, պատմական գերեզմանների տարածքում ապօրինի հողհատկացումները բացառելու հարցերին: Այս առումով մարզպետը նշեց, որ խնդիրը առկա է գրեթե բոլոր համայնքներում, և կարևորեց համայնքապետերի հետևողականությունն ու պատասխանատվությունը այս հարցերում:

Քաղպաշտպանության և մարզի համայնքներում հակահրդեհային անվտանգության ապահովման խնդիրների մասին խոսեց մարզային փրկարարական վարչության նորանշանակ ղեկավար Ա. Մանուկյանը:

Մարզխորհրդի նիստում քննարկվեցին նաև հանքային և օրգանական պարարտանյութերի կիրառման, համայնքապետարանների էլեկտրոնային տեղեկատվական համակարգերի կիրառման և այլ հարցեր, արվեցին հայտարարություններ

Ավարտին մարզպետ Սարգիս Սահակյանը նախկին գանձապետական տարածքային կազմակերպությունների ղեկավարներին պարգևատրեց պատվոգրերով, ի նշան նրանց վաստակաշատ աշխատանքի գնահատանքի և շնորհակալության:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ